ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՂԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԿԱՅԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Երվանդ Օտյան, «Անիծյալ տարիներ»)

Երվանդ Օտյանի հուշագրության մեջ («Արյունոտ հիշատակներ», «Տասներկու տարի Պոլսեն դուրս», «Գրական հիշատակներ», «Վերհիշումներ», «Տասնվեց տարի ետքը») առանձնահատուկ է Եղեռնին նվիրված «Անիծյալ տարիներ» վավերագրություն-վկայագրությունը:

Այս ծավալուն հուշագրությունը բացառիկ է Եղեռնի փաստավավերագրական, գեղարվեստական վկայություններում (Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալլաքյան՝ «Հայ Գողգոթան», Վահան Միրանխորյան՝ «1915 թվականը. արհավիրքի օրեր», Արամ Անտոնյան՝ «Այն սև օրերուն», «Մեծ ոճիրը», Կարապետ Գաբիկյան՝ «Եղեռնապատում», Սալբի՝ «Մեր խաչը» և այլն)՝ ընդգրկունությամբ, մանրամասների առատությամբ, աղետի և տարագրության համապատկերային վերաներկայացումով:

Ծուրջ հինգ հարյուր էջանոց հուշագրություն-վկայությունն ընդգրկում է Առաջին աշխարհամարտի սկզբից, 1915-ի ապրիլ 24-ի չարաշուք գիշերից մինչև Հայոց Գողգոթայի գրեթե բոլոր վայրերի՝ Գոնիա և Տարսոն, Համա և Էլ Պուսերա, արաբական անապատներ և Դեր-Զոր, փոքր ու մեծ, քիչ թե շատ նշանակալի և երկրորդական դեպքերի բազում մանրամասներ:

«Անիծյալ տարիներ»-ի պարզ շարադրանքը, սրընթաց պատումը, անպաճույճ ոճն առավելագույնս ընդգծում է այս հուշ-վկայագրության արժեքը: Հավելենք, որ Օտյանը միակ դասական վերապրող գրողն էր, որ ստեղծեց աքսորի և տարագրության պարունակների ամբողջական պատկերը:

Տասնհինգ գլխից ու վերջաբանից բաղկացած հուշագրությունը XX դարի հայոց պատմամշակութային կյանքի հանգուցային հուշարձաններից է:

Ցավ ի սիրտ, Օտյանի այս հույժ արժեքավոր և կարևոր վկայագրությունը ցարդ գրեթե անմատչելի է եղել ոչ միայն արդի հանրությանը, այլև, առանց դույզն ինչ չափազանցության, ընթերցողին և մասնագետներին: Բանն այն է, որ հանգամանքների բերումով Կոստանդնուպոլսի «Ժամանակ» օրաթերթի 1919-ի միակ գրեթե ամբողջական հավաքածուն քայքայված վիճակում պահպանվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում և առարկայական պատճառներով անմատչելի է մասնագետներին:

Ավստրիայի հայ համայնքի վարչության նախագահ Գեորգ Անտոնյանի սիրահոժար ջանքերով և աջակցությամբ հաջողվեց ձեռք բերել այս բացառիկ հուշարձանի պատճենը և հուշագրությունը հրատարակության պատրաստել: Օգտվելով առիթից, ցանկանում ենք

մեր շնորհակալությունը և խորին երախտագիտությունը հայտնել թե՛ Ավստրիայի հայ հասարակությանը և թե՛ պարոն Գեորգ Անտոնյանին:

Երեքուկես տարվա աքսորից հետո, 1919-ին, Պոլիս վերադառնալուն պես Օտյանը սկսում է գրել «Անիծյալ տարիները», որն իբրև թերթոն լույս է տեսնում Պոլսի «Ժամանակ» օրաթերթում 1919 թ. փետրվարի 6-ից մինչև սեպտեմբեր 25-ը:

«Անիծյալ տարիները» առնեցուն է Աղետի նահատակների և աքսորի, տարագրության պարունակներով անցած բազմաթիվ դեմքերի վկայագրություններով: Բնականաբար Հայոց Գողգոթայի ականատես Օտյանը հանդիպել է և իր հուշերում վավերագրել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բազմաթիվ ներկայացուցիչների կենսապատումը Աղետի դժոխքում:

Հայ հոգևորականը մեր պատմության այս ամենաողբերգական և ճակատագրական ժամանակաշրջանում էլ եղել է իր ժողովրդի առաջամարտիկը, հովիվը, որ աքսորի և մահվան հաճախանքում աներևակայելի զոհողություններով սատարել, ամոքել և ամենակարևորը՝ իսկական փրկագործությամբ պահպանել է իր հոտի ազգային, բարոյական նկարագիրը, պատնեշել ոգին ոչնչացումից: Ասվածի պերճախոս վկայություններից են, օրինակ, Նիկոմեդիայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Հովակիմյանի, Գոնիայի առաջնորդ Գարեգին վարդապետ Խաչատուրյանի, Սուլթանիեի հոգևոր հովիվ Դավիթ քահանա Դպիրյանի, շուրջ երկու տասնյակ մյուս հոգևորականների օտյանական վկայագրությունները:

Ստորև «Էջմիածին» հանդեսի ընթերցողին ենք ներկայացնում մի քանի փոքրիկ հատված Երվանդ Օտյանի այս հուշագրությունից:

Հավելենք, որ աքսորի ճանապարհին Օտյանը որոշ ժամանակ, ստույգ մահվանից խուսափելու համար, հանդես է եկել իբրև Գարեգին վարդապետի հորեղբայր՝ Երվանդ Խաչատուրյան անունով: Վարդապետը մի քանի անգամ ինչպես շատերին, այնպես էլ Օտյանին փրկել է բանտարկությունից, տաժանակիր աշխատանքից, երևակայության բոլոր սահմաններն անցնող առավել վատթար դժոխային իրավիճակներում հայտնվելուց:

Դանթեական դժոխքից անհամեմատ սարսռազդեցիկ Հայոց Գողգոթայի գրողի բնութագրմամբ «ահռելի տեսարաններ»-ից մեկ-երկուսը նույնպես զետեղել ենք ստորև, ինչը, կարծում ենք, մինչև գրքի տպագրությունը կօգնի հանդեսի ընթերցողին փոքր-ինչ պատկերացում կազմելու Օտյանի սույն հուշագրության մասին: